

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՐԵՆԻ ԵԶԵՆՔԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐՈՒՄ

ԱՐԾՐՈՒՆ ԱՎԱԳՅԱՆ

1908 թ. թուրքական սահմանադրությունը Վահան Թեքեյանին հնարավորություն տվեց 12 տարվա բացակայությունից հետո վերադառնալ Կ. Պոլիս: Այդպիսի մի փորձ նա արդեն կատարել էր 1902-ին, բայց ձերբակալվել էր և 15 օր բանտ նստելուց հետո արտաքսվել երկրից:

Համիդյան իշխանության տապալումը ոգևորություն էր առաջացրել նաև արևմտահայության մեջ: Վահրամ Մալեգյանին ուղղված մի նամակում, խոսելով հանդերձ նաև իրեն պատած այդ ոգևորության մասին, Թեքեյանը, այնուամենայնիվ, նկատել է տալիս, որ երբեք չպիտի մոռանալ, *«որ երկիրն իս թուրքիա է»*¹: Պոլսում Թեքեյանը ծավալում է լրագրական, մշակութային, կուսակցական ու գրական լայն գործունեություն, ընտրվում Ազգային երեսփոխանական ժողովի անդամ, խմբագրում «Շիրակ» գրական-քաղաքական շաբաթաթերթը, որը յուրովի շարունակությունն էր լինելու Կահիրեում լույս տեսած «Շիրակ» գրական ու ընկերային ամսաթերթի, և որը դադարել էր 1908-ին՝ Արփ. Արփիարյանի սպանության պատճառով: Թեքեյանը խմբագրում է «Հայրենիք» թերթը, Եր. Օտյանի ընկերակցությամբ նաև՝ «Արեւելք» օրաթերթը, դառնում Ազգային կեդրոնական վարժարանի խնամակալական կազմի անդամ, 1911-ին որպես եգիպտահայության ներկայացուցիչ մասնակցում էջմիածնում կայացած կաթողիկոսական ընտրություններին, 1912-ին խմբագրական գործունեություն ծավալում «Լուսարձակում», որը շուտով միանում է «Արեւելքին»: 1913-ին Թեքեյանը ուսուցչություն է անում Կ. Պոլսի Նոր դպրոցում և Հինդիյան վարժարանում, վարում Ազգային հիվանդանոցի գրասենյակի տեսչությունը, Դ. Վարուժանի, Ահարոնի, Հ. Ճ. Սիրունու, Կ. Զարյանի, Փ. Թերլեմեզյանի, Հ. Օշականի, Զ. Եսայանի և այլոց հետ հիմնում «Աստեղատունը»^{*}, որի ատենապետ է ընտրվում Կոմիտաս վարդապետը, մամուլում հրապարակում տասնյակ բանաստեղծություններ, որոնց թվում և «Տաղ հայերեն լեզուին» չքնաղ գործը:

Ահա այսպիսի ծավալուն ու ընդգրկուն գործունեության մեջ էր գրողը, երբ Կ. Պոլսի Ազգային ժողովը նրան նշանակեց Կեսարիայի Սուրբ Կարապետ վանքի վարժարանի^{*} տեսուչ:

¹ Տե՛ս Վահան Թեքեյան, Նամականի, Լոս Անջելես, 1983, էջ 149:

^{*} Նախատեսվում էր նույնանուն տարեգրքի հրատարակում:

^{*} Վարժարանը հիմնվել էր Հովհաննես և Մկրտիչ Եսայանների նպաստով:

1913-ի սեպտեմբերի 2-ին Թեքեյանը մեկնում է Կեսարիա և այնտեղ մնում հինգ ամիս՝ մինչև 1914-ի հունվարի 31-ը, որի ընթացքում էլ գրառել է իր «*Երթուղարձի եւ բնակութեան օրագիրը*»՝ «Կեսարիա» ընդհանուր խորագրով, որը թերթոնի ձևով առաջին անգամ տպագրվեց Կ. Պոլսի «Ժողովուրդի ձայնը - Ժամանակ» թերթի 1921թ. մայիս-հուլիս ամիսների համարներում: Թեքեյանի «Կեսարիան» գեղարվեստական առումով չի գերազանցում գրողի մյուս արձակ գործերը և բնականաբար հեռու է հայ դասական հուշագրության՝ Եր. Օտյանի «Տասներկու տարի Պոլսեն դուրս», Կ. Ջարյանի «Անցորդը և իր ճամփան», Վ. Շուշանյանի օրագրությունների ու այլ հեղինակների ստեղծած համանման գրական արժեքներից, սակայն հարյուր էջից մի փոքր ավելին կազմող այս գործը ականատեսի հավաստի վկայություններ են ժամանակաշրջանի կեսարահայության կյանքի ճանաչողության առումով, որոշակի բացահայտում գրողի կենսագրության մանրամասների և, շնորհիվ հեղինակի գրավիչ լեզվի, պատկերվող դեպքերի ու երևույթների ուշագրավության, կարդացվում է հետաքրքրությամբ: Օրագրությունը բաղկացած է «Պոլսեն Կեսարիա» երթի, «Դեպի Պոլիս» դարձի և բուն Կեսարիայում անցկացրած ժամանակաշրջանը պատկերող երկու՝ «Կեսարիա» և «Ս. Կարապետի վանքը եւ վարժարանը» գլուխներից, որոնցից ամենածավալունը վերջինն է:

Խոսելով օրագրությունը հանրությանը ներկայացնելու իր որոշման մասին՝ Թեքեյանը գրում է, որ կյանքի այդ շրջանը «*նուիրական*» է իր համար և «*յուզումներ*» պատճառող, և ներքին հրամանի անսալով՝ ուզեցել է «*ուրիշներուն ալ սիրեցնելու... այն ժամանակը, այն տեղերն ու այն դեմքերը*», որոնք իրեն «*ա՛յնքան սիրելի են*»² (այս և հետագա ընդգծ. իմն են – Ա. Ա.):

Թեքեյանը իր կյանքի ընթացքում հասցրել է լույս ընծայել բանաստեղծությունների վեց գիրք: Նրա մի շարք գործեր (տպագիր և ոչ տպագիր) լույս տեսան հետմահու՝ Կահիրեի «Թեքեան ֆոնտի յանձնախումբի» վեցհատորյակում (նախատեսված էր 15 հատոր), սակայն մինչ այսօր շարունակում են մամուլի զանազան էջերում սփռված մնալ և ըստ ամենայնի գրքի տեսքով հայ ընթերցողին չեն ներկայացվել նրա թատերգական, չափածո, արձակ, հրապարակախոսական, թարգմանական, ուսումնասիրական և մի շարք այլ գործեր:

Այս առումով, ինչ խոսք, կրկնակի ուրախալի է «Ժամանակ» օրաթերթի 100-ամյա տարելիցի առիթով մատենաշարային 4-րդ թվով՝ Թե-

¹ Սա Թեքեյանի՝ օրագրություն գրելու երկրորդ փորձն էր: Առաջինը վերաբերում էր 11 տարեկանում իր հարազատների հետ Արմաշի վանք այցելությանը, և որը պատռել է վերադարձից հետո դժգոհ լինելով թե՛ ճանապարհորդությունից, թե՛ գրածից:

² Վ. Թեքեան, Կեսարիա, Երթուղարձի եւ բնակութեան օրագիր մը, Բսթանպուլ, 2016, էջ 45: Այս գրքից կատարված մեջբերումների էջերը այսուհետև կնշվեն շարադրանքում փակագծի մեջ:

Մատենաշարի 5-րդ թվով 2017-ին լույս տեսավ Թեքեյանի «Երկու դրախտները» գիրքը, որը ամփոփում է նրա մի շարք հրապարակախոսական, գրական, մշակութային հոդվածներն ու հուշ-վկայությունները:

քեյանի «Կեսարիա» գործի սպագրությունը՝ սփյուռքահայ գրականագետներ Գրիգոր Պըլտեանի ուշագրավ առաջաբանով և Մեան Տեյիբ-մենճեանի աշխատասիրությամբ: Գրությանը տրված ենթավերնագրով թեև Թեքեյանը այն անվանում է «... *օրագիր մը*», սակայն իրականում «Կեսարիան» ամփոփում է նաև հեղինակային նոթեր, խոհագրություններ, դատողական ու վերլուծական խոսք, պատմական ու աշխարհագրական տեղեկատվություններ, ծանոթագրություններ, հուշեր...

Գրական երկի առանձնահատկություններից մեկն այն է, որ միշտ էլ լրացումների ու մեկնաբանությունների տեղիք է տալիս: Ուրեմն մեկ անգամ ևս անդրադարձ կատարենք Թեքեյանի օրագրական էջերին՝ այս անգամ գրքի տեսքով մեզ ներկայացած՝ ուշադրություն բևեռելով Թեքեյան անձի այն հույզերի ու տվյալտանքների վրա, որոնք մտալկել են գրողին, առանց որոնց չէին ներկայացվի ո՛չ օրագրության մեջ առկա իրադարձությունները, և ո՛չ էլ կգրառվեին խոհերի ու դատումների այն զեղումները, որոնք օրագրությանը հաղորդում են իսկապես թեքեյանական շունչ:

Թեքեյանը իր օրագրությունը սկսում է հակիրճ մի ընծայականով. *«Ի յիշատակ Կեսարիոյ Ս. Կարապետ վանքի վարժարանի 1913-14 շրջանի այն բազմաթիւ աշակերտներուն, ուսուցիչներուն եւ խնամակալներուն, որոնք մեծ աղէտին մէջ անհետացան»* (էջ 43):

Հասկանալի է, որ այս տողերը գրվել են ավելի ուշ, երբ Թեքեյանը որոշել է իր գրությունը մամուլին հանձնել, և երբ արդեն տեղի էր ունեցել *«մեծ աղէտը»*, ու այլևս որպես անդառնալի հուշ գրողին պիտի ներկայանային նրանք, ում հետ աշխատել և կամ ում դաս էր տվել վանքում գտնված ժամանակ: Ըստ ամենայնի՝ գրողը վերանայել է նաև ողջ նյութը, և դա ոչ միայն խմբագրական առումով, այլև մի քանի տարվա հեռավորությունից՝ իր բառով ասած՝ *«ներկայի»* հաշվառումով դիտելով այն ժամանակն ու *«դէմքերը»*, որոնց մասին ինքը գրում է, և որոնք նոր ու լրացուցիչ իմաստավորումներ էին ստացել: Եվ այստեղ խոսքը միայն ներկայացվող փաստերի և գաղափարների նոր իմաստավորումների մասին չէ, այլև գրության արտահայտած ոգեկանության, մի բան, որ բնորոշ է գեղարվեստական խոսքին, մի բան, որի մասին դեռևս 1898-ին սկսած և 1900-ին տպագրած իր «Ներաշխարհի» «Ծանօթութիւն» վերնագրած էջում վկայում էր նաև Տիրան Չրաքյանը (Ինտրա). *«Բայց ինչ որ... այս գրքին մէջ համեմատաբար հասարակաց է հեղինակին ներկային՝ անտարակոյս գաղափարները չեն անպատճառ, քանի որ անոնք նորանոր հանգամանքներէ կազդուին, նորանոր ծանօթութիւններով կը սրբագրուին, կը փոխուին ու կրնան ջնջուիլ. այլ՝ հոգեկան խառնուածքը. ընդհանուր տրամադրութիւնը. գլխավոր ճաշակները. ոգին...»*³ (Ա. Ա.): Ահա այդ հոգեկանն ու ոգեղենն է, որ ամ-

³ Ինտրա, Հովին ձայնը, Եր., 2014, էջ 48:

ենից առաջ փոխվել էր, և գրողը, դիմելով իր «ընթերցողին», գրում էր, որ ինքը «ամէն անգամուն նոր բաներ» է տեսնում իր օրագրությունը ընթերցելիս, և այդ «նոր բաները» դեպքերը չէին, այլ ոգեղեն զգայնություններն ու արտահայտած մտքերի խորքը:

Թեքեյանը վաղուց էր փափագել այցելել Կեսարիա՝ իր ծնողների ծննդավայր, որտեղ անցել էր նաև նրա մանկության մի մասը: Եվ հենց սկզբից շոգեկառքով ու կառքով վեց օր տևած ճանապարհորդության ընթացքում, Թեքեյանի մեջ ծնվում են հին հուշեր, որոնք, խառնվելով ճանապարհին տեսած ու լսած բազում իրադարձություններին, մեր առջև պարզում են նախնի ժամանակների քաղցր պատկերներ ու գծագրում այն փլուզված վիճակը, որի մեջ գտնվում էր Թուրքիան 20-րդ դարասկզբին: Մի կողմից Անատոլիայի խուլ ու հետամնաց գյուղերը՝ մուրացիկներ հիշեցնող իրենց բնակիչներով, թուրք պաշտոնյաների սգիտությունով ու իջևանատների կեղտոտությունով, մյուս կողմից գեղեցիկ բնաշխարհն ու գրավիչ հեռաստանները Թեքեյանի հոգում ծնունդ են տվել ոչ միայն ուշագրավ մտածումների, այլև երկրագիտական, ժողովրդագրական, տնտեսական ու քաղաքական խոր ընդհանրացումների: Ահա 1912-13 թթ. Բալկանյան պատերազմի առթիվ Թեքեյանը պատկերում է դեպի ռազմաճակատ տարվող թուրք նորահավաք զինվորների անճարակ ու «տխու՛ր, տխու՛ր» վիճակը, դեպի Բաղդադ կառուցվող (որով ճանապարհորդում էր Թեքեյանը) երկաթգծի շինարարության անորոշ ու անմխիթար ընթացքը, որի վերաբերյալ գրում է. «Բնձի կը թուի... թէ ան երբեք պիտի չամբողջանայ», և այդ ծրագիրը նմանեցնում է լրագրերի մեջ ու դիվանագետների ուղեղներում եղած հայկական բարեփոխումների ծրագրին, որը «...կայ ու չկայ միանգամայն...», որը «բանակցութեանց նիւթ կըլլայ ու կանհետանայ ...ժողովուրդ մը գրգռելու (թուրքը – Ա. Ա.) եւ ուրիշ մը (հայը – Ա. Ա.) քնացնելու» (էջ 58):

Թեքեյանը հետաքրքիր պատմություններ է անում նաև ուղեկից մի շարք անձանց մասին՝ հայ, թուրք, հույն, բնութագրում նրանց, նկարագրում ազգային որոշ սովորույթներ, հիանում ճանապարհին տեսած գեղեցիկ թռչուններով, բուսականությամբ ու կենդանական աշխարհով, վերջիններիս վարքի ու ճակատագրի վերաբերյալ կատարում ուշագրավ դատողություններ, որոնցից մեկն էլ վերաբերում է ազատ դաշտում շրջանաձև վարճող երկու ձիերին, որոնք «... իրենք իրենց համար կրկէսի մը բոլորակն են գծեր ու քառատրոփ կը դառնան անընդհատ...», որքան մտրակի հարուած կերած ու վազած ըլլալու են այդ մարզարանին վրայ, - գրում է Թեքեյանը, - որպէսզի ինքնիրենին ալ նոյն շրջանակաձեւ վազքը շարունակեն» (էջ 65): Բայց արդյո՞ք Թեքեյանի խոսքը միայն այդ կենդանիներին է վերաբերում: Բռնակալությունների և ուժի ներքո հեծող մարդկանց ու ժողովուրդներին չի վերաբերում նաև, ովքեր «մտրակի» սովորույթից ստիպված շրջանաձև «նոյն

վազքն» են անում իրենց կյանքում՝ այլևս հաշտված իրենց դառը ճակատագրի հետ:

Եթե հաշվի չառնենք մանկության ժամանակ իր ծնողների ծննդավայրում անցկացրած ամառային ամիսները, սա հասուն տարիքում երկրի ներսում (Անատոլիա) Թեքեյանի կատարած առաջին ճանապարհորդությունն էր (այն նաև վերջինը եղավ), և առաջին դեպքը, որ նա համեմատաբար երկար ապրեց ու աշխատեց Պոլսից դուրս՝ մի կողմ թողնելով թե՛ խմբագրական և թե՛ հասարակական ու կուսակցական գործերը: Ավելին, այդ հինգ ամիսները ինչ-որ տեղ Թեքեյանի *«կյանքի ընդմիջում»* եղան, ինչպես գրում է՝ *«... իմ ցեղիս եւ մարդկային ցեղի կյանքին դադարը...»*: Ուշագրավ է, որ իր կյանքի ընթացքում հազարավոր էջերով նամակներ գրած Թեքեյանը այս ընթացքում գրել է ընդամենը մեկ նամակ, որն ուղղված է Ջավեն պատրիարքին, որտեղ նա վերջինիս շնորհավորում է պատրիարք ընտրվելու և իր պաշտոնին անցնելու կապակցությամբ:

Թեքեյանի կյանքի անցյալ օրերի բազում իրողություններ՝ իր *«դէմքովն ու հոգիովը»*, մեզ է ներկայանում օրագրության գրեթե բոլոր էջերում: Ժամանակ, վայրեր, դեմքեր... Թեքեյանը իր հուշագրությունը կառուցել է այս երեք նիշերի վրա՝ դրանցից ամեն մեկին խառնելով իր սպավորություններն ու մտածումները:

Կեսարիան թեև Թեքեյանի ծնողների ծննդավայրն էր, սակայն այնքան էլ սիրելի չի եղել գրողին. *«Պոլիսը՝ ծննդավայրս, Հայաստանը՝ հայրենիքս, ալ ուրիշ սիրոյ մը համար, տեղ չկար սրտիս մէջ»* (էջ 47), գրում է Թեքեյանը: Մեր կողմից այդ կայուն **սերերին** չենք կարող չհավելել նույն թվականին գրված նրա «Տաղ հայերէն լեզուին» քերթվածում արված երրորդ խոստովանությունը՝ *«Մրգաստանի՝ մը նըման կը սիրեմ քեզ, Հայ՝ Լեզու...»*: Եվ իսկապես, գրող մարդու համար ինչը կարող է ավելի սիրելի լինել, քան հենց գիրն ու լեզուն, որ այդ նույն **հայրենիքն** է, այդ նույն **ծննդավայրը** և էլի ամեն և ամեն բան:

Կեսարիան* մշտական *«մշուշով կամ փոշիով սքողուած»* Էրճիաս (Արզեոս) լեռան ստորոտին տարածված, հրաբխային քարերով շրջապատված, երկար ու նեղ մի փոքրիկ քաղաք էր, որի վերաբերյալ Թեքեյանը գրում է. *«Ահավասիկ ոտքս Կեսարիոյ հողին վրայ է, աւելի ճիշտ յարդին ու աղբին վրայ»* (էջ 80): Առաջին իսկ օրը Թեքեյանը հանդիպում է իր ազգականներին, որոնցից հատկապես մի քանիսի վերաբերյալ մեզ համար թանկագին վկայություններ է տալիս. *«Այդ առաջին օրը*

* 20-րդ դարակազմին Կեսարիան ուներ շուրջ 50 հազար բնակիչ, որից 14-15 հազարը հայեր էին: Քաղաքը իր անունը ստացել է Օգոստոս Կեսարի պատվին: Կեսարիան եղել է նաև արքեպիսկոպոսանիստ քաղաք, որտեղ ձեռնադրվել են հայոց կաթողիկոսներ: Սկսած 11-րդ դարից՝ Կեսարիան թուրքմենական, սելջուկ-մոնղոլական, թուրքական ու եգիպտական բռնակալների ձեռքից ձեռք է անցել, որի վերաբերյալ Թեքեյանը գրում է. «Իմ ինչ որ Կեսարիա, ի նշեր ես տեսել, ի նչ փորձանքներ եկել են զլուխդ» (էջ 139):

հանդիպած ազգականներէս չորսը չկան արդէն. Գառնիկ Գույումճեան եւ Աւետիս Զամպարճեան – երկու կտրիճ եւ ազնիւ երիտասարդներ – 1915-ին Կեսարիոյ մէջ առաջին կախուողներէն եղան, Գառնիկ Ճրճրեան տարագրութեան մէջ անհետացաւ եւ տիկ. Կիւլիզար Գույումճեան, հօրեղբօրաղջիկս... քանի մը ամիս առաջ մեռավ... տարագրութենէ դարձին...» (էջ 80):

Թեքեյանը իր կյանքի բերումով Արմաշից, Էջմիածնից, Երուսաղէմից հետո չորրորդ վանքի հետ է, որ պիտի առնչվեր: Պիտի տեսնէ՞ր այնտեղ իր երևակայության մէջ ստեղծված ներքին խորհուրդը՝ «խունկով ու աղօթքով լեցուն»...: Իհարկէ՛ ոչ: Ողբերգական էին նաև վանքի ուսուցիչների իմացությունները: Ինքը պիտի ջանար փոխել վանքի վարժարանի հիմնադրման օրից շարունակվող դասատվության քարացած ձևերն ու մեթոդները, «հնօրեայ» վարժապետների դասատվությունների որակն ու բովանդակությունը: Օրինակ՝ վանքում անգամ կար մի քահանա, «որ բառ մը հայերէն չի գիտեր», բայց գրաբարով Ավետարան «կը կարդար»: Թեքեյանը պատմում է նաև, թե ինչպես վարժարանի ուսուցիչներից մեկը դասի ժամանակ ասում է, թե Պ. Դուրյանը Համիդի զոհն է եղել, քանի որ սուլթանը թողել է, որ թարգմանվեն եվրոպական «աղտոտ վէպերը», որոնց ընթերցումով «մեր խեղճ» Դուրյանը, թրքուհիների հետևից նայելով, «կը մաշէր, կը հատներ՝ մինչև որ թոքախտ եղաւ ու մեռաւ...» (էջ 106):

Բարդություններից մեկն էլ աշակերտության մեծ մասի գյուղացի ու տարեց լինելն էր (առօրյա հարաբերություններում նրանք հաճախ խոսում էին թուրքերեն, որը Թեքեյանը խստագույնս արգելում է), վանքի պարիսպներից ներս գտնվելու նրանց վիճակը, ապրած միօրինակ կյանքը, որը պահանջում էր մոտեցումների այլ որակ ու այլ չափանիշներ, ասել է թե՛ անհարկի խստությունները պիտի բացառվեին նրանց հետ շփումներում, և ամեն բան պիտի կառուցվեր փոխադարձ հարգանքի հիման վրա: Հասկանալի է, և դա Թեքեյանը լավ էր պատկերացնում, որ նման պահանջը պիտի առաջացներ վարժարանի որոշ վարժապետների դժգոհությունը, մանավանդ որ եղած տնտեսական հնարավորությունները շատ սուղ էին և հնարավորություն չէին տալիս ծավալվելու, և, ինչպես գրում է Թեքեյանը, «... Սորպոնի դասախոսներն ալ այսպիսի պայմաններու մէջ շատ բան մը պիտի չկրնային ընել...» (էջ 89): Այդ նույն պայմանների (կերակուրների անորակության, նկուղային դասարանների, շարունակական պահքերի, անտանելի ցրտերի...) պատճառով հաճախ հիվանդանում էին նաև վարժարանի աշակերտները: Զավեշտականն այն էր, որ վանքի եպիսկոպոսներից մեկը աշակերտներին սփոփել է, թե՛ «առաջ աւելի անգոհացուցիչ էր»: Թեքեյանը կսկիծով է գրում աշակերտներից մեկի՝ ժանտախտով վարակվելու մասին, որի նկատմամբ գրողը մեծ սրտացավություն է ցուցաբերել, ժամերով մնացել հիվանդի կողքին ու նրան խնամել, երբ

չէր բացառվում, որ ինքն էլ վարակվեր՝ ով գիտե, նրա որք ճակատագրի մեջ գուցե տեսնելով նաև իր կիսաորբ (հայրը մահացել էր, երբ ինքը հազիվ տասը տարեկան էր) մանկությունը:

Թեքեյանը հումորով է պատմում վանքում հաճախակի տրվող ոսպապուրի ու ռուփի մասին, որոնցում հաճախ ներկա էին «*պզտիկ չարա... ճճիներ*», և որոնց առիթով աշակերտները կատակում էին. «*Էֆենտի՛, պահքերնիս կաւրուի, մսեղէն կուտան կոր մեզի*» (էջ 103):

Կեսարիայում գտնված ժամանակ Թեքեյանը «*ուխտաւորի մը երկիւղածութեամբ*» այցելել է նաև իր ծնողների «*գոյգ յարկերը*» կատարելով մանավանդ իր 75-ամյա մոր խնդրանքը. «*Հօրդ տունէն ետք զնա՛ իմ հօրս տունն ալ տե՛ս... Չախ թեւին մէջ վերի յարկը ելի ր: Պարտէզին վրայ նայող պզտիկ սենեակ մը կայ, իմ սենեակս*» (էջ 113): Կարելի է երևակայել, թե սրտի ի՛նչ թրթռացումներով է Թեքեյանի մայրը այդ հանձնարարականը տվել, և ի՛նչ հույզերով է այն ընդունել բանաստեղծը:

Թեքեյանի մայրը փոքր հասակում կորցրել էր հորը ու 7 տարեկանում նշանվել. դրանով իսկ վերջացել էր նրա թե՛ կրթությունը (քահանայի մոտ), թե՛ մանկությունը: Ամուսնացել էր 17 տարեկանում՝ տեսած չլինելով իր նշանածին և առաջին անգամ տեսնելով միայն հարսանիքի օրը:

Օրագրությունը օգնում է մեզ նաև ավելի մոտիկից ճանաչելու Թեքեյան մանկավարժին, խորանալու նրա գործունեության մեջ, հաղորդակցվելու նրա հայրենանվեր զգացումներին: Գրքի ուշագրավ էջերից են հեղինակի անդրադարձները Կեսարիայում բնակվող տարբեր ժողովուրդների փոխհարաբերություններին: Նա, օրինակ, պատմում է, որ Թալաս գյուղում, որտեղ Թեքեյանի մայրական գերդաստանը այգի ուներ, և ընտանիքի անդամները ամառը այնտեղ էին անցկացնում, ապրող հույներն ընդամենը ունեին մի ծեր ուսուցիչ, ով «*յունարէն գրերով թուրքերէն կարդալ-գրել*» է սովորեցրել իր սաներին: Թեքեյանը գրում է նաև, որ հայերը հունական եկեղեցի էին այցելում հաղորդություն առնելու, մինչդեռ «*յոյները ոտք չէին դնէր հայոց եկեղեցին*» (էջ 70): Առաջին հայացքից կարող է թվալ, թե Թեքեյանը լոկ կենցաղային մի փաստ է արձանագրում: Մինչդեռ գրողը հստակորեն պատասխանում է շատ կարևոր մի հարցի, որի մասին հաճախ խոսվում է կիսաբերան. ինչո՞ւ բռնակալության լծի տակ գտնվող ժողովուրդները միասնական ճակատով չպայքարեցին ընդհանուր թշնամու դեմ: Մի հարց, որի պատասխաններից մեկն էլ հենց տողամիջով տալիս է Թեքեյանը. այդ ազգերը միմյանց նկատմամբ հաճախ նույնքան անհանդուրժող էին, որքան իրենց ճնշողների:

Այս ընթացքում պատահել են նաև ուսուցիչների կողմից թույլ տրված գործավարական խախտումներ, աշակերտներից ոմանց դրսևվորած ընդդիմություններ, որոնցից Թեքեյանը հիշում է մանավանդ

«ճաշասրահի» և «հանդեսի» դեպքերը, որոնք կապված էին թալասցի 15-17 տարեկան տղայի հետ, ով դրսևորել էր կամակորություն ու ամբարտավանություն, և Թեքեյանը նրան ուզեցել է պատժել վարժարանից հեռացնելով, սակայն աշակերտի գոշումից հետո նրան թողել է ուսումը շարունակելու:

Երբ Թեքեյանը 1921-ին Կ. Պոլսում տպագրեց իր օրագրությունը, այս առիթով Ենովբ Արմենը հանդես եկավ «Ժողովուրդի ձայն-ժամանակ» թերթում՝ հանդիմանելով Թեքեյանին մանկավարժական ոչ ճիշտ վերաբերմունքի համար, որին Թեքեյանը պատասխանել է, թե ինքը օրագրությունը հրատարակելիս չի հիշատակել աշակերտի տված պատասխանները, որոնք «անկարգ» են եղել, և որոնց համար էլ նրա հարցը քննվել է խստությամբ:

Գրողը Կեսարիայում գտնված ժամանակ վարժարանի աշակերտությանը հաղորդակից է դարձրել աշխարհիկ մի շարք հայ ազգային գործիչների (Մ. Չավարյան, Ա. Քալանթար) կյանքին ու գործին, կազմակերպել հայերեն տառերի ստեղծման ու հայ տպագրության հորելյաններին նվիրված միջոցառումներ, աշակերտներին հաղորդակից դարձրել մշակութային ու քաղաքական կյանքում (բալկանյան պատերազմ և այլն) տեղի ունեցող իրադարձություններին, որոնք գրողի նկատմամբ մեծ ակնածանք են հարուցել աշակերտների շրջանում: Այդ խանդաղատանքի վկայություններից մեկն է Կադանդի և Ծնունդի տոնի կեսգիշերին Թեքեյանի ննջասենյակի դռան ետևում աշակերտների կազմակերպած շնորհավորական երգը՝ «մանտղինով և ջութակով» «Առուօտ լուսույր» կատարելով: Թեքեյանի կյանքի այս շրջանի հիշարժան դեպքերից մեկն է իր անվանակոչության (Թեքեյանը իր անունը ստացել է ի պատիվ սուրբ Վահան Գողթնեցու) օրը աշակերտների հնչեցրած Գ.Սրվանձոյանցի՝ Վարդանանց մահվանը ձոնված երգի (որը «*հրզմայլելի բառերով*» գրողի ամենասիրած երգն էր) կատարումը:

Իր ամբողջության մեջ Թեքեյանի այս գործը մեկ անգամ ևս հավաստում է գրողի բնավորությանն ու մտածողությանը բնորոշ շատ հատկանիշներ՝ անմնացորդ նվիրում իր ստանձնած գործին, գրի հանդեպ պատասխանատվություն, մտածման թևածումներ, շարադրանքի սահունություն ու պատկերավորություն, ասելիքի հասցեականություն... որոնց շատ ավելի կատարյալ դրսևորումները առկա են նրա բազում բանաստեղծություններում:

Թեքեյանը ծրագրել էր վարժարանում մնալ առնվազն մեկ տարի՝ իրականացնելու համար իր նախատեսած ուսումնական ծրագրերը: Սակայն հազիվ հինգ ամիսը լրացած՝ Պոլսից հեռագիր է ստանում, որից տեղեկանում է, որ Ազգային ժողովը իր թեկնածությունը առաջադրել է որպես Երուսաղեմի վանքի իր ներկայացուցիչ՝ ընդունված նոր կանոնագիրը կիրառելու և վանքում տիրող գործընթացները կարգավորելու համար:

Թեքեյանը իհարկե գիտեր, թե «Երուսաղէմը ինչպիսի մեղուանոց մըն է»: Կար և այն հանգամանքը, որ գրողը դեռ չէր հասցրել ուսումնասիրել Ս. Կարապետ վանքում առկա ձեռագրերը, Կեսարիայի շրջակայքը այցելել, լինել իր մայրական տանը, հանդիպել իր բուրբ ազգականներին: Եվ, վերջապէս, Թեքեյանը չէր ուզում թողնել իր աշակերտներին, որոնց հետ այնքան մտերմացել ու հարազատացել էր, չէր ուզում լքել «բարձրակուտակ» Էրճիաս լեռը, որի մեջ նա տեսնում էր ուժ, «*ինքնամփոփ մտածում եւ կամք*», և որը խորհրդանիշն էր ողջ Կեսարիայի ու իր նախնիների, որի վերաբերյալ այդ օրերին գրած իր «Ս. Կարապետ Կեսարիոյ» բանաստեղծության մեջ նշում է, որ այն հսկում է «...այս երկրին, այս երկրնքին ալ վըրայ»: «Կը խորհիմ,- իր օրագրում շարունակում է Թեքեյանը, -*թէ իմիններէս քանինէ ը, սկսեալ Ս. Գրիգոր Լուսաւորիչէն, Ս. Սահակ Պարթեւէն, առաջին թարգմանիչներէն անոնց որոնց զարգացման համար Կեսարիան նախընտրուեցաւ Աթէնքին – մինչեւ իմ իսկ ծնողքս ու ազգականներս, այս պատկերներն ունեցան իրենց աչքին առջեւ եւ տպաւորուեցան անկէ*» (էջ 131):

Այս ընթացքում Թեքեյանը ծանր հիվանդանում է: Տենդի մեջ նրան անգամ թվում է, թե «*Կեսարիան կ'ուզէ պահել զիս, զէթ ոսկորներս նախահայրերուս ոսկորներուն քով*» (էջ 130):

Ու թէն առաջին որոշումը լինում է «*չէրթալ*», սակայն, նոր պաշտոնի ողջ դժվարությունները պատկերացնելով հանդերձ, մանավանդ Օրմանյան սրբազանի փափագին (դառնալ Երուսաղէմի պատրիարք) տեղյակ լինելով հանդերձ, Թեքեյանը այնուամենայնիվ համաձայնում է: Մեկնելուց առաջ նա այցելում է ոչ հեռու գտնվող Ս. Դանիել վանք, լինում Պալակասի գյուղում, որի մասին վկայում է, որ բնակիչների կեսից ավելին «*Ամերիկա գացած է*», և այնտեղից ուղարկված դրամով է գյուղը հիմա ապրում: Իր հորեղբոր կնոջն ու նրա աղջկան տեսնելու համար մեկնում է Կերմիր գյուղ, որի հայ բնակիչների մեծ մասը նույնպէս լքել էր իր տուն ու տեղը: Թեքեյանը այցելում է նաև Թալաս գյուղ, լինում տանը կից այն այգում, որտեղ մանկության տարիներն էր անցկացրել իր մայրը:

Թեքեյանի այս գործը ամենից առաջ մի **վկայություն է**: Վկայություն հայության կյանքի բարդ մի շրջանի ու այն մարդկանց մասին, ովքեր եղեռնի հետևանքով անցյալ էին դարձել: Եվ ուրեմն «օրագրությունը», որքան էլ արտահայտում է կեսարական կյանքի մի շրջան, ավելի մեծ ընդգրկում ու ասելիք ունի: Այն ողջ գավառահայության ճակատագրի խտացում է նաև: Եվ հենց սա է, որ բարձրացնում է նրա արժեքը ու հարազատ դարձնում մեզ համար ևս:

Ստեղծագործական առումով բեղուն չեղան Կեսարիայում ապրած ամիսները: Թէն, եթե տուրք տանք գրականագետ Գր. Պըլտյանի ենթադրությանը, Թեքեյանը հենց Կեսարիայում է խմբագրել իր «Հրաշալի Յարութիւն» գիրքը (տե՛ս «Կեսարիա» գրքի 7-րդ էջը), որը ստեղծագոր-

ծական առումով պակաս ջանք ու աշխատանք չէ: Բայց որպես գուտ «կեսարական» կյանքի ստեղծագործական արդյունք Թեքեյանը մեզ է հրամցրել երկու քերթված՝ «Ս. Կարապետ Կեսարիոյ» և «Գիշերուան աղօթքը», որոնցից առաջինը վերաբերում է գրողի՝ որպես «Աստուծոյն ուխտաւոր» առաջին մուտքին Ս. Կարապետ վանք*, իսկ երկրորդը՝ որպես վերջին հրաժեշտի խոսք այդ վանքին ու նրա բնակիչներին:

1914-ի հունվարի 30-ին՝ բաժանման հուզիչ բանախոսությունից հետո, Թեքեյանը կարդում է իր աշակերտների համար գրված «Գիշերուան աղօթքը» բանաստեղծությունը՝ և մեկնում վանքից՝ սրտում ընդմիջտ պահելով Կեսարիան ու «*իր տղաքներին*», նորից ու նորից շեշտելով իր նախնիների ու բոլոր գալիք սերունդների հավերժական երթի անկասելիությունը.

*Հարիր քրսան տղաքներուն՝ որոնք այստեղ
Ամիսներէ ի վեր կ'ապրին միշտ ինձի հետ,
Որոնց ահա՛ ամէն մէկուն աչքերն ու դէմքն
Իրենց ձայնին հետ դէպի ինձ կը բարձրանայ...*

Մի վերջին «գիշեր» էլ Կեսարիայում Թեքեյանը անց է կացնում իր հարազատների օջախում, վայելում հարազատ-բարեկամների գործվն ու հյուրասիրությունը և հաջորդ օրը ցուրտ ձմեռով ճանապարհ ընկնում դէպի Կ. Պոլիս՝ առանց երբեք կռահելու, որ շատ շուտով ավելի մութ ու ցուրտ դեպքեր ու մարդիկ էին իրեն հանդիպելու թե՛ Կ. Պոլսում և թե՛ մանավանդ Երուսաղեմում:

Թեքեյանը Երուսաղեմում քիչ մնաց՝ մեկ ամսից մի փոքր ավելի: Թե՛ն Ազգային ժողովի կողմից կոչված էր կարգավորելու վանքում տարածում գտած հակասություններն ու զեղծումները, մանավանդ կյանքի կոչելու մշակված նոր կանոնադրությունը, սակայն Ս. Օրմանյանի հետ ունեցած անհամաձայնության և հակասության պատճառով գրողն արդեն 1914 թ. մայիսի կեսերին նամակ է գրում Ազգային երեսփոխանական ընդհանուր ժողովի նախագահ, Թուրքիայի հայոց պատրիարք, արքեպիսկոպոս Զավեն Տեր-Եղեյանին՝ պարզաբանելու համար վանքում տիրող տխուր կացությունը: Իսկ նույն տարվա հունիսի 14-ի իր նամակում, որն ուղղված էր Ազգային երեսփոխանական ընդհանուր ժողովի ատենապետ Գաբրիել Նորատունկյանին, Թեքեյանը, փաստելով, որ վանքում իրեն ընդունում են որպես հյուրի և ոչ թե՛ «*իրական իշխանություն*» ունեցողի⁴, հայտնում է իր հրաժարականը և հունիսի 2-րդ տասնօրյակում Երուսաղեմից հեռանում Հոպպե, ապա Եգիպտոս:

* Զինադադարից հետո շուրջ տասը տարի Ս. Կարապետ վանքը որբանոց էր նաև:

** Բանաստեղծությունը մտել է 1914-ին Կ. Պոլսում հրատարակված «Հրաշալի Յարութիւն» գրքի մեջ: Նույն ժամանակ գրված «Ս. Կարապետ Կեսարիոյ» բանաստեղծությունը Թեքեյանը դրեց 1933-ին Փարիզում տպագրված «Մեր» ժողովածուի մեջ:

⁴ Տե՛ս **Վ. Թեքեյան**, Նամականի, էջ 495-498:

Այս դեպքում բարեբախտաբար հաստատվեց այն ասույթը, թե «չկա չարիք առանց բարիքի»: Թեքեյանի մեկնումը փրկեց նրան եղեռնի զոհ դառնալուց: Նրա օրագրության այս տպագրությունը առանձին գրքով, որ գովելի նախաձեռնություն է, մեկ անգամ ևս փրկում է Թեքեյանի կյանքը, քանի որ ամեն մի գրողի նոր գրքի տպագրությունը նրա հեղինակի անվան փրկություն է մոռացությունից:

Այսօր, երբ վերաքաղ ենք անում Թեքեյանի ստեղծագործական աշխարհին ու նրա կյանքին վերաբերող նյութերը, ավելի ու ավելի ենք համոզվում, որ դեռ շատ բան կա անելու, և որ գրողին առնչվող հարուստ նյութ կա ամփոփված մանավանդ հայ մամուլի փոշեպատ էջերում: Իսկական ու մեծ գրողները եկող ժամանակների ու գալիք սերունդների հետ անընդհատ վերաբացվելու նոր ու մեծ հնարավորություններ են ընձեռում: Մեզ մնում է մոռացությունից փրկել այն ամենը, ինչը դեռ չի դրվել ընթերցողի սեղանին, և ուրեմն ասելու ու գրելու դեռ շատ բաց էջեր սպասում են մեզ:

Բանալի բառեր – *Կ. Պոլիս, Կեսարիա, օրագիր, Թեքեյան, Ս. Կարապետ վանք, ուսուցիչ, աշակերտներ, հայ, հույն, հոգևորական, Թալաս, Երուսաղեմ*

АРЦРУН АВАГЯН – На путях открытия родного края. – В статье анализируется книга-дневник Ваана Текеяна «Кесария», написанная в 1913-м и впервые опубликованная в 1921 г. в константинопольской газете «Жоховурди дзайн – Жаманак» (Голос народа – Время). Отдельным изданием книга вышла в свет в 2016 г. в Стамбуле. Она примечательна не только тем, что знакомит с рядом эпизодов биографии замечательного поэта, но и тем, что широко освещает жизнь армянского населения города, название которого вынесено в заголовок произведения.

Ключевые слова: *Константинополь, Кесария, дневник, монастырь св. Предтечи, учитель, ученики, священнослужитель, Иерусалим*

ARTSRUN AVAGYAN – On the Way of Discovering the Native Land. – The article presents Vahan Tekeyan's diary "Caesarea", which was written in 1913 and was first published in 1921 in the newspaper "People's Voice – Zhamanak" in Constantinople. The Diary this time was published as a book in Istanbul in 2016. This work of V. Tekeyan is significant not only for the recognition of some fragments of his biography but also for revealing many aspects of the life of the Armenians in Caesarea.

Key word: *Constantinople, Caesarea, diary, Tekeyan, monastery St. Karapet, teacher, pupils, Armenian, Greek, priest, Talas, Jerusalem*